Հավելված N 1
ՀՀ վարչապետի 2009 թ.
ապրիլի -ի N - Ա
որոշման

Կ Ա Զ Մ

ՄՇԱԿՈՒՅԹԻ ՀԱՆՐԱՀՌՉԱԿՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ՀԱՄԱԿԱՐԳՈՂ ՄԻՋԳԵՐԱՏԵՍՉԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

Տ. Սարգսյան	- ՀՀ վարչապետ (հանձնաժողովի նախագահ)
Ա. Գևորգյան	- ՀՀ փոխվարչապետ, ՀՀ տարածքային կառավարման նախարար
Տ. Դավթյան	- ՀՀ ֆինանսների նախարար
Ն. Երիցյան	- ՀՀ էկոնոմիկայի նախարար
Հ. Հակոբյան	- ՀՀ սփյուռքի նախարար
Է. Նալբանդյան	- ՀՀ արտաքին գործերի նախարար
Հ. Պողոսյան	- ՀՀ մշակույթի նախարար
Ս. Մեյրանյան	- ՀՀ կրթության և գիտության նախարար
Ս. Օհանյան	- ՀՀ պաշտպանության նախարար
Ա. Աշոտյան	- ՀՀ Ազգային ժողովի գիտության, կրթության, մշակույթի, երիտասարդության և սպորտի հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ (համաձայնությամբ)
Դ. Սարգսյան	- ՀՀ կառավարության աշխատակազմի ղեկավար
Վ. Սարգսյան	- ՀՀ Նախագահի աշխատակազմի ղեկավարի տեղակալ (համաձայնությամբ)
Ա. Կարապետյան	- ՀՀ կառավարության աշխատակազմի սոցիալական վարչության պետ
Նավասարդ արքեպիսկոպոս Կճոյան	- Հայաստանյայց առաքելական եկեղեցու Արարատյան հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ (համաձայնությամբ)
Ա. Վարդանյան	- «Հայաստան» համահայկական հիմնադրամի տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար (համաձայնությամբ)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Դ. ՍԱՐԳՍՅԱՆ

Հավելված N 2
ՀՀ վարչապետի 2009 թ.
ապրիլի -ի N - Ա
որոշման

Ա Շ Խ Ա Տ Ա Կ Ա Ր Գ

ՄՇԱԿՈՒՅԹԻ ՀԱՆՐԱՀՌՉԱԿՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ՀԱՄԱԿԱՐԳՈՂ ՄԻՋԳԵՐԱՏԵՍՉԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Մշակույթի հանրահռչակման ծրագրի աշխատանքները համակարգող միջ-գերատեսչական հանձնաժողովը (այսուհետ՝ հանձնաժողով) ստեղծվում է մշակույթի հանրահռչակման խնդիրների քննարկման, դրան առնչվող հարցերի լուծման, ծրագրով նախատեսված աշխատանքների համակարգման նպատակով։

II. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

2. Հանձնաժողովի նախագահը Հայաստանի Հանրապետության վարչապետն է, որը հաստատում է հանձնաժողովի անհատական կազմը։

3. Հանձնաժողովի կազմում կարող են ընդգրկվել Հայաստանի Հանրապետության կառավարման մարմինների, ինչպես նաև, իրենց համաձայնությամբ, մշակույթի ոլորտում գործող քաղաքացիական հասարակության ինստիտուտների ներկայացուցիչներ, հեղի-նակություն վայելող՝ ճանաչված գործիչներ, հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ և այլ անձինք։

4. Հանձնաժողովն իր աշխատանքները կազմակերպում է նիստերի միջոցով, որոնք գումարվում են առնվազն յուրաքանչյուր վեց ամիսը մեկ անգամ։ Անհրաժեշտության դեպքում, հանձնաժողովի նախագահի նախաձեռնությամբ, կարող է գումարվել արտահերթ նիստ։

5. Հանձնաժողովի նիստն իրավազոր է, եթե դրան մասնակցում է հանձնաժողովի անդամների կեսից ավելին։

6. Հանձնաժողովի նիստերը վարում է հանձնաժողովի նախագահը։

7. Հանձնաժողովի նիստերին կարող են հրավիրվել պետական մարմինների՝ հանձնաժողովի օրակարգում ընդգրկված հարցերին առնչվող աշխատողները, ինչպես նաև հասարակական կազմակերպությունների և զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչներ՝ իրենց համաձայնությամբ։

III. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԵՐԻ ԱՆՑԿԱՑՈՒՄԸ

8. Հանձնաժողովի նիստերն անցկացվում են հանձնաժողովի նախագահի կողմից հաստատված օրակարգով։ Հանձնաժողովի նախագահը որոշում է հանձնաժողովի նիստի անցկացման վայրը և ժամը։ Հանձնաժողովի յուրաքանչյուր անդամ հանձնաժողովի նիստի օրակարգում ընդգրկելու համար կարող է նիստից առնվազն 15 օր առաջ հարց ներկայացնել։

9. Հանձնաժողովի օրակարգում նշվում են՝

1) հանձնաժողովի նիստի անցկացման վայրը, օրը և ժամը.

2) քննարկման ենթակա հարցերը.

3) քննարկվող յուրաքանչյուր հարցը զեկուցողի անունը, ազգանունը։

10. Հանձնաժողովի նիստերի օրակարգը և քննարկվելիք հարցերին վերաբերող մյուս անհրաժեշտ փաստաթղթերը հանձնաժողովի անդամներին են փոխանցվում նիստից առնվազն 5 աշխատանքային օր առաջ։

11. Հանձնաժողովի գործունեության կազմակերպչական-տեխնիկական աշխատանքներն ապահովում է Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատակազմը։

IV. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆՊԱՏԱԿԸ, ՔՆՆԱՐԿՎՈՂ ՀԱՐՑԵՐԻ ԵՎ ԸՆԴՈՒՆՎՈՂ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՇՐՋԱՆԱԿԸ

12. Հանձնաժողովի նպատակն է՝

1) մշակույթի հանրահռչակման ծրագրի իրականացման ռազմավարական պլանավորման, միջոցառումների ծրագրերի մշակման գործընթացներին օժանդակելը.

2) մշակույթի հանրահռչակման ծրագրի իրականացմանը, գնահատմանը և այդ գործընթացներում քաղաքացիական հասարակության մասնակցությանը նպաստելը.

3) մշակույթի հանրահռչակման ծրագրի արդյունավետության բարձրացման վերաբերյալ առաջարկություններ մշակելը։

13. Հանձնաժողովի կողմից քննարկվող հարցերի շրջանակն ընդգրկում է՝

1) մշակույթի հանրահռչակման ընդհանուր քաղաքականության ուղղությունների, ինչպես նաև առաջնահերթությունների վերաբերյալ առաջարկություններ ներկայացնելը.

2) Հայաստանի Հանրապետության կառավարության գործունեության ծրագրի, ազգային ռազմավարական ծրագրերի (Կայուն զարգացման ծրագիր, հակակոռուպցիոն, միջնաժամկետ ծախսերի ծրագրեր և այլն) հիման վրա մշակույթի հանրահռչակման գործունեության տարեկան ծրագրի ձևավորումը և գերակա ուղղությունների վերաբերյալ առաջարկություններ ներկայացնելը.

3) մշակույթի հանրահռչակման ծրագրի միջոցառումների տարեկան բյուջետային ծրագրերի պլանավորումը.

4) մշակույթի հանրահռչակման և մշակութային քաղաքականության ծրագրերի, ոլորտում իրականացվող բարեփոխումների ու դրանց գործնական ազդեցության գնահատման և մոնիթորինգի ցուցանիշների վերաբերյալ առաջարկություններ ներկայացնելը.

5) մշակույթի ոլորտում և ոլորտից դուրս տեղեկույթի տարածման (հաղորդակցային) ռազմավարության քննարկումը.

6) հանձնաժողովի նախագահի նախաձեռնությամբ՝ մշակույթի հանրահռչակմանը, ռազմավարությանն ու քաղաքականությանն առնչվող այլ հարցեր։

14. Հանձնաժողովը բաց քվեարկությամբ, ձայների պարզ մեծամասնությամբ կարող է ընդունել խորհրդատվական բնույթի որոշումներ։

V. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ ԱՐՁԱՆԱԳՐՄԱՆ ԵՎ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԳՈՐԾԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ

15. Հանձնաժողովի նիստերի արձանագրումն ապահովում է Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատակազմը։

16. Հանձնաժողովի նիստը կարող է տեսագրվել կամ ձայնագրվել, որի վերաբերյալ համապատասխան նշում է կատարվում հանձնաժողովի նիստի արձանագրության մեջ։

17. Նիստի արձանագրության մեջ նշվում են՝

1) նիստի անցկացման ամիսը, ամսաթիվը, տարեթիվը և վայրը, նիստն սկսելու և ավարտելու ժամերը.

2) նիստի օրակարգը.

3) նիստին մասնակցող, հրավիրված անձանց և զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչների անունները.

4) քննարկվող հարցերի, զեկուցումների և ելույթների հիմնական դրույթները.

5) ընդունված որոշումները, դրանց տարածման և (կամ) հրապարակման ձևերը։

18. Նիստի արձանագրությանն անհրաժեշտության դեպքում կցվում են քննարկված հարցերին վերաբերող նյութեր, այդ թվում՝ իրավական և այլ փաստաթղթերի (հայեցակարգեր, ռազմավարություններ, հաշվետվություններ և այլն) նախագծեր, գրավոր զեկույցների և ելույթների տեքստեր։

19. Հանձնաժողովի նիստի արձանագրությունն ստորագրվում է հանձնաժողովի նախագահի կողմից՝ 3 աշխատանքային օրվա ընթացքում։

20. Հանձնաժողովի նիստերի արձանագրությունները պահվում են Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատակազմում։

VI. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

21. Հանձնաժողովի նախագահը՝

1) նախագահում է հանձնաժողովի նիստերը.

2) հաստատում է հանձնաժողովի օրակարգը և ստորագրում հանձնաժողովի նիստերի արձանագրությունները.

3) լսում է հանձնաժողովի կողմից ընդունված որոշումների կատարման ընթացքի մասին հաշվետվությունները և տալիս ցուցումներ ու հանձնարարականներ.

4) ընդունում է որոշումներ քննարկված ծրագրերի իրականացման համար ֆինանսական, նյութական, տեղեկատվական, մարդկային և այլ ռեսուրսների բաշխման մասին.

5) որոշում է հանձնաժողովի նիստերին հրավիրվող անձանց կազմը.

6) իրականացնում է սույն աշխատակարգով սահմանված այլ լիազորություններ։

22. Հանձնաժողովի անդամն իրավունք ունի՝

1) ներկայացնելու հարցեր՝ հանձնաժողովի օրակարգում ընդգրկելու համար.

2) հանձնաժողովի նիստերի ընթացքում քննարկվող հարցերի վերաբերյալ ներկայացնելու բանավոր կամ գրավոր կարծիք.

3) մասնակցելու որոշումների ընդունման համար քվեարկությանը։

VII. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿՈՂՄԻՑ ՔՆՆԱՐԿՎԱԾ ՀԱՐՑԵՐԻ ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿՈՒՅԹԻ ՏԱՐԱԾՈՒՄԸ ԵՎ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄԸ

23. Հանձնաժողովի նիստերի արձանագրությունները կամ արձանագրության քաղվածքները տրամադրվում են հանձնաժողովի բոլոր անդամներին, իսկ ընդունված

որոշումները տեղադրվում են Հայաստանի Հանրապետության կառավարության և համապատասխան նախարարության ինտերնետային կայքում։

24. Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատակազմը հանձնաժողովի նիստերի արձանագրությունները կամ արձանագրության քաղվածքները հանձնաժողովի անդամներին է տրամադրում սահմանված կարգով։

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Դ. ՍԱՐԳՍՅԱՆ